ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«27» Դեկտեմբեր 2026թ. N 18-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 29-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 904-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 253-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի և Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի փետրվարի 25-ի թիվ 55-Ա որոշման պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունիսի 8-ի «Պետական մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող շարժական գույքի պահառության

կարգը հաստատելու մասին» N 29-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «շարժական գույքի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ այն տրանսպորտային միջոցների, որոնք պիտանի չեն շահագործման համար և ենթակա են տեղափոխման հատուկ միջոցների՝ քարշակի օգտագործմամբ), ինչպես նաև մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված (արգելապահված) և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) հանձնված այն ապրանքների, որոնց իրացման հետ կապված նախատեսվող ծախսերը գերազանցում են դրանց արժեքն ու հարկային մարմնի կողմից Կոմիտեի տնօրինմանը հանձնված հսկիչ գնմամբ ձեռք բերված և չվերադարձված ապրանքների» բառերը,

2) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի՝

ա) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմին) տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող շարժական գույքի (բացառությամբ այն տրանսպորտային միջոցների, որոնք պիտանի չեն շահագործման համար և ենթակա են տեղափոխման հատուկ միջոցների՝ քարշակի օգտագործմամբ), ինչպես նաև մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված (արգելապահված) և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից Կոմիտեին հանձնված այն ապրանքների, որոնց իրացման հետ կապված նախատեսվող ծախսերը գերազանցում են դրանց արժեքն ու հարկային մարմնի կողմից Կոմիտեի տնօրինմանը հանձնված հսկիչ գնմամբ ձեռք բերված և չվերադարձված ապրանքների (այսուհետ՝ Գույք) պահառության հետ կապված հարաբերությունները:»,

բ) 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)» բառերը փոխարինել «Կոմիտեի» բառով,

գ) ուժը կորցրած ճանաչել 3-րդ և 5-րդ կետերը,

դ) 7-րդ կետում «արձանագրման:» բառից հետո լրացնել «Ընդ որում, օտարման ենթակա շարժական գույքի պահառության ընդունումը կազմակերպվում է գույքի օտարման մասին համապատասխան իրավական ակտով սահմանված՝ հանձնման-ընդունման աշխատանքների իրականացման ժամկետում:» նախադասությունը,

ե) 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«10. Եթե առկա չէ պահառության ընդունված Գույքի գնահատման գործող (ուժի մեջ գտնվող) հաշվետվություն, ապա Գույքի օտարման գործընթացը նախապատրաստելու մասին Կոմիտեի գրավոր ծանուցումը ստանալու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից սահմանված կարգով կազմակերպվում են Գույքի՝ օտարման նպատակով գնահատման աշխատանքները, որպես ելակետային ընդունելով ինչպես Կոմիտեի կողմից ՊՈԱԿ-ին տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված, այնպես էլ Գույքը պահառությանը հանձնելու ընթացքում կազմված փաստաթղթերը: Գույքի գնահատման հաշվետվությունը վերը նշված ժամկետում ներկայացվում է Կոմիտե, դրանում նշելով Գույքը պահառությանը հանձնված լինելու հանգամանքը»,

զ) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. Գույքի գնահատման աշխատանքների ավարտից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում գնահատման հաշվետվության հիման վրա Կոմիտեի կողմից մշակվում է գույքի օտարման կամ օգտագործման մասին իրավական ակտի նախագիծը և օրենսդրությամբ սահմանված կարգով դրվում շրջանառության մեջ:»:

3/27/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան